ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

11.08.2020թ. կնքված N ՀՆԱ-ԳՀԱՇՁԲ-20/73 ծածկագրով «Պետության կարիքների համար ոռոգման համակարգի վերանորոգման և արդիականացման աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի

ք.Երևան

«28» սեպտեմբեր 2020թ.

Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խ. Պողոսյանի, որը գործում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կանոնադրության և Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 28.04.2020թ.-ի Հ-75-Ա հրամանի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լանդշաֆտ Դիզայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Իսրաելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետ (Կողմեր), հիմք ընդունելով 11.08.2020թ. կնքված N «ՀՆԱ-ԳՀԱՇՁԲ-20/73» ծածկագրով գնման պայմանագրի, այսուհետ (Պայմանագիր), 8.5 և 8.13 կետերը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման՝ վճարման ժամանակացույցը համաձայն հավելվածի:

1.2 Սահմանել, որ Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման պայմանը մտնում է ուժի մեջ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը (ներառյալ հավելվածը) կազմված է երկու էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հանրապետության նախագահի աշխատակազմ	«Լանդշաֆտ Դիզայն» ՍՊԸ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1	ք. Երևան, Օրբելի 8շ. բն. 63
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011204089	Հ/Հ 205002219843
ՀՎՀՀ 00006505	ՀՎՀՀ 00251608
/ Խ. Պողոսյան /	/ Ա. Իսրաելյան /
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
« 28 » սեպտեմբերի 2020թ.կնքված
N 1 համաձայնագրի

Հավելված N 2
«11» օգոստոսի 2020թ. կնքված
ՀՆԱ-ԳՀԱՇՁԲ-20/73 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	45231113/501	Ոռոգման համակարգի վերանորոգման և արդիականացման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	8100000	8100000	8100000	8100000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հանրապետության նախագահի աշխատակազմ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505

/ Խ. Պողոսյան /
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լանդշաֆտ Դիզայն» ՍՊԸ
ք. Երևան, Օրբելի 8շ. բն. 63
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002219843
ՀՎՀՀ 00251608

/ Ա. Իսահակյան /
Կ.Տ